ՆԱԽԱԳԻԾ

Դպրոցում աշակերտի վարքագծի օրինակելի կանոններ

Աշակերտի վարքագծի սույն կանոնները մշակված են «Հանրակրթության մասին» ԷՂՀ օրենքին, ուսումնական հաստատության կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին, ԱՀ Սահմանադրությանը համապատասխան:

Կանոնների նպատակն է՝ դպրոցում ստեղծել բնականոն աշխատանքային իրավիճակ, որը կնպաստի յուրաքանչյուր աշակերտի ուսումնառությանը, անձի հանդեպ հարգանքի դաստիարակությանը, վարքի կուլտուրայի և հաղորդակցման կարողությունների զարգացմանը:

1. Դպրոցում վարքագծի ընդհանուր կանոններ

1.1. Աշակերտը գալիս է դպրոց դասերի մեկնարկից 10-15 րոպե առաջ, մասնակցում առավոտյան լիցքային վարժություններին:

1.2. Աշակերտը դպրոց է ներկայանում կոկիկ արտաքին տեսքով:

1.3. Աշակերտը ներկայանում է ուսումնական պայուսակով՝ անհրաժեշտ գրենական պիտույքներով և դասի համար անհրաժեշտ այլ ուսումնական նյութերով:

1.4. Արգելվում է դպրոց բերել, ցուցադրել, օգտագործել զենք, ծակող և կտրող առարկաներ, պայթուցիկ և դյուրավառ նյութեր, ոգելից խմիչքներ, ծխախոտ, լուցկի, կրակայրիչ, թմրանյութեր և այլ թունավոր նյութեր:

1.5. Աշակերտը կարող է բջջային հեռախոս կամ այլ տեխնիկական միջոցներ օգտագործել միայն ըստ անհրաժեշտության (ուսումնական կամ լրացուցիչ նյութերի ունկնդրման կամ որոնման նպատակով): Աշակերտի կողմից սույն կանոնը կրկնակի խախտելու դեպքում տնօրենն իրավունք ունի բռնագրավել բջջային հեռախոսը, այն պահել հատուկ պահարանում՝ մինչև հեռախոսը ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) հանձնելը:

1.6. Արգելվում է դպրոց բերել և տարածել տպագիր նյութեր, որոնք առնչություն չունեն ուսումնական գործընթացին:

1.7. Աշակերտը ուսուցչի թույլտվությամբ մտնում է ուսումնական կաբինետ (համակարգչային կաբինետ, արհեստանոցներ, մարզադահլիճ), հանգիստ գրավում իր տեղը, պատրաստում դասի համար անհրաժեշտ բոլոր պարագաները: Դասը սկսվում է զանգով:

1.8. Աշակերտը չի կարող ուշանալ դասերից, ներկայանալ դասի զանգից հետո, հեռանալ և բաց թողնել դասերը առանց հիմնավոր պատճառի: Ուշացած աշակերտը դասին ներկա է լինում ուսուցչի թույլտվությամբ, ուշացման մասին գրառում է կատարվում աշակերտի օրագրում:

1.9. Դասերից բացակայելու դեպքում աշակերտը դասղեկին է տրամադրում բժշկական տեղեկանք կամ, դրա անհնարինության դեպքում, ծնողների (օրինական ներկայացուցիչների) գրությունը բացակայելու պատճառի վերաբերյալ:

1.10. Աշակերտի բացակայության ժամանակ ուսումնական ծրագրի յուրացման պատասխանատվությունը կրում են աշակերտը և նրա ծնողները (օրինական ներկայացուցիչները):

1.11. Առողջական կամ այլ պատճառներով աշակերտը կարող է լքել դպրոցը պարապմունքների ժամանակ միայն դասղեկի կամ փոխտնօրենի թույլտվությամբ: Այդ մասին դասղեկը կամ հերթապահ ուսուցիչը հեռախոսով տեղեկացնում է աշակերտի ծնողներին (օրինական ներկայացուցիչներին):

1.12. Աշակերտը հարգանք է ցուցաբերում ուսուցիչների և դպրոցի բոլոր աշխատողների նկատմամբ, հոգ է տանում փոքրերի մասին, մեծահասակներին դիմում է «դուք»-ով:

1.13. Աշակերտը մեծահասակներին, փոքրերին և աղջիկներին պետք է զիջի և առաջինը ներս թողնի:

1.14. Աշակերտը պարտավոր է խնամքով վերաբերվել դպրոցի, սեփական, ինչպես նաև շենքում և տարածքում գտնվող բոլոր անձանց պարագաներին և գույքին, չգրել և չփորագրել սեղաններին, աթոռներին, դռներին և պատերին: Սույն կանոնը խախտելու դեպքում աշակերտի ծնողները (օրինական ներկայացուցիչները) համարժեք նյութական պատասխանատվություն են կրում:

1.15. Աշակերտն իրավունք չունի դպրոցի տարածքում գտնվելիս և դպրոցական միջոցառումների ժամանակ կատարել գործողություններ, որոնք վտանգավոր են իր և շրջապատի մարդկանց կյանքի և առողջության համար:

1.16. Դպրոցում և նրա տարածքում արգելվում է ծխել, վիրավորական արտահայտություններ անել, օգտագործել շպարի պարագաներ, ալկոհոլ:

1.17. Աշակերտը ցանկացած վայրում իրեն արժանապատվորեն է պահում և գործում է այնպես, որ չնսեմացնի իր պատիվը, ծնողների և դպրոցի հեղինակությունը:

2. Վարքագծի կանոններ դասարանում

2.1. Աշակերտը ողջունում է ուսուցչին և ցանկացած մեծահասակի՝ ոտքի կանգնելով և նստելով ուսուցչի թույլտվությամբ:

2.2. Դասի ընթացքում աշակերտը պետք է ուշադիր լսի ուսուցչին, կատարի նրա պահանջները, որոնք չեն հակասում Արցախի Հանրապետության օրենքներին, ուսումնական հաստատության կանոնադրությանը և ներքին կանոնակարգին: Ուսուցիչը կարող է աշակերտին առաջադրանքներ տալ, կանչել գրատախտակի մոտ, բանավոր և գրավոր հարցում անել, անցկացնել և գնահատել թեմատիկ, կիսամյակային ամփոփիչ, գործնական, դասարանական, տնային և թեստային աշխատանքները: Յուրաքանչյուր առարկայի գնահատման չափանիշները պետք է հաղորդվեն աշակերտին և նրա ծնողներին (օրինական ներկայացուցիչներին): Դասի ընթացքում ուսուցչի պահանջով աշակերտը ներկայացնում է օրագիրը:

2.3. Դասի ընթացքում չպետք է աղմկել, շեղվել և շեղել ուրիշների ուշադրությունը զրույցներով, խաղերով, նամակագրությամբ և դասի հետ չկապված այլ հարցերով, չխախտել դասարանի մյուս աշակերտների ուսումնառության իրավունքը:

2.4. Եթե դասերի ժամանակ աշակերտը ստիպված է հարգելի պատճառով դուրս գալ դասարանից, ապա նա պետք է խնդրի ուսուցչի թույլտվությունը: Նման դեպքում ուսուցիչը պարտավոր է բավարարել աշակերտի խնդրանքը:

2.5. Դասին աշակերտը կարող է դիմել ուսուցչին, հարց տալ կամ պատասխանել՝ միայն ձեռքը բարձրացնելով և թույլտվություն ստանալով:

2.6. Աշակերտը իրավունք ունի բարեկրթորեն պնդելու իր հայացքները և համոզմունքները տարաբնույթ վիճահարույց հարցերի քննարկման ընթացքում:

3. Վարքագծի կանոններ ընդմիջմանը, դասերից առաջ և հետո

3.1. Ընդմիջումների ժամանակ, դասերից առաջ և հետո աշակերտը չպետք է լինի լաբորատորիաներում, համակարգչային կաբինետում, մարզադահլիճում, միջոցառումների դահլիճում, արհեստանոցում՝ առանց ուսուցչի կամ պատասխանատու անձի:

3.2. Հերթապահ դասարանը (աշակերտը) օգնում է հերթապահ ուսուցչին հետևել կարգապահությանը դասամիջոցներին:

3.3. Աշակերտը կարող է ընդգրկվել հասարակական աշխատանքներում:

3.4. Աշակերտը պարտավոր է՝

- ապահովել մաքրություն և կարգուկանոն աշխատանքային տեղում,
- կատարել ուսուցչի պահանջները:

3.5. Աշակերտը չի կարող՝

- հեռանալ դպրոցից մինչև դասերի ավարտը՝ առանց թույլտվության,
- վազել աստիճաններով և միջանցքներով,
- նստել պատուհանագոգերին,
- հպվել հակահրդեհային և էլեկտրական վահանակներին,

- հպվել էլեկտրական լարերին և լամպերին,
- բղավել, աղմկել, օգտագործել անպարկեշտ արտահայտություններ և ժեստեր,
- հրել միմյանց, կիրառել ֆիզիկական ուժ, նետել տարբեր առարկաներ,
- խաղալ կյանքի և առողջության համար վտանգավոր խաղեր,
- խանգարել ուրիշների հանգիստը։

4. Վարքագծի կանոններ զուգարաններում

4.1. Աշակերտը պահպանում է հիգիենայի և սանիտարական պահանջները։

5. Վարքագծի կանոններ մարզադահլիճի հանդերձարաններում

5.1. Աշակերտը մարզադահլիճի հանդերձարաններում է լինում միայն ֆիզկուլտուրայի պարապմունքից առաջ և հետո՝ ուսուցչի թույլտվությամբ և նրա հսկողության ներքո։

5.2. Դասի ընթացքում արգելվում է գտնվել հանդերձարաններում։

5.3. Հանդերձարաններում արգելվում է վազել, ցատկել, հրել միմյանց։

5.4. Դասի վերջում աշակերտը արագ փոխում է հագուստը և հեռանում հանդերձարաններից։ Արգելվում է հանդերձարաններն օգտագործել այլ նպատակներով։

5.5. Իրերը կորցնելու կամ վնասվելու դեպքում աշակերտը անմիջապես տեղեկացնում է ֆիզկուլտուրայի ուսուցչին կամ հերթապահ ուսուցչին։

5.6. Աշակերտը ֆիզկուլտուրայի դասերին մասնակցում է միայն մարզահագուստով և մարզակոշիկներով։

6. Աշակերտի վարքագիծը ճաշարանում

6.1. Ճաշարանում աշակերտը պարտավոր է դրսևորել լավ վարքագիծ, պահել իրեն ըստ արժանվույն։

6.2. Աշակերտը պարտավոր է հարգանքով վերաբերվել ճաշարանի աշխատողներին։

6.3. Ճաշի ընթացքում պետք է խոսել ոչ բարձր՝ չանհանգստացնելու համար հարևանությամբ ճաշողներին։

6.4. Ճաշից հետո աշակերտը հավաքում է սեղանը, աթոռները դնում իրենց տեղը։

6.5. Արգելվում է ճաշարան մտնել վերնազգեստով։

7. Վերջնական դրույթներ

7.1. Դպրոցի աշակերտը, գտնվելով ցանկացած վայրում, իրավունք չունի ստեղծել այնպիսի իրավիճակներ, որոնք սպառնում են ուրիշների և իր կյանքին, առողջությանն ու բարեկեցությանը։

7.2. Աշակերտը պահպանում է այս կանոնները դպրոցական ժամերին, ինչպես նաև ուսումնական պարապմունքներից դուրս ցանկացած գործունեության ժամանակ, այդ թվում՝ դպրոցից դուրս:

7.3. Վերոնշյալ կետերի և դպրոցի կանոնադրության խախտումը ենթադրում է տույժ Արցախի Հանրապետության գործող օրենսդրությանը և դպրոցի ներքին կանոններին համապատասխան:

Կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

- նկատողություն,
- խիստ նկատողություն:

Աշակերտի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը կարգապահական նոր խախտում թույլ չի տվել և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ աշակերտ:

Վերոնշյալ կարգապահական տույժը մեկ ուսումնական տարվա ընթացքում նույն աշակերտի նկատմամբ կրկնակի կիրառելու դեպքում ուսումնական հաստատությունը կարող է՝

- առաջարկել ծնողին (օրինական ներկայացուցչին) տեղափոխել այլ ուսումնական հաստաություն,
- դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմնին՝ երեխային սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու առաջարկով:

7.4. Նշյալ կանոնների մասին տեղեկացվում է աշակերտին դասղեկի ժամերին՝ յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի սկզբում (դրանք փակցվում են դասարանական անկյուններում), և ծնողներին (օրինական ներկայացուցիչներին)՝ ծնողական ժողովների ընթացքում: Աշակերտը և ծնողները (օրինական ներկայացուցիչները) պարտավոր են իմանալ սույն կանոնները և ստորագրությամբ հաստատել, որ ծանոթացել են կանոնակարգին:

Դասղեկ՝ ——————————————————————— ——— ———— ————թ.

Ծանոթացել եմ վարքագծի կանոններին

——————————————————— աշակերտի ստորագրությունը

Ծանոթացել եմ վարքագծի կանոններին

——————————————————— ծնողի (օրինական ներկայացուցչի)

ստորագրությունը

7.5. Դասղեկը համապատասխան գրառում է կատարում հատուկ մատյանում աշակերտի հետ վարքագծի կանոնների ուսումնասիրության վերաբերյալ:

7.6. Այս կանոնները պարտադիր են դպրոցի բոլոր աշակերտների համար: